# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

| | | |
|---|---|---|
| 1. | Անունը, ազգանունը | Գառնիկ Պետրոսյան |
| 2. | Զբաղեցրած պաշտոնը | ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ |
| 3. | Գործուղման վայրը և ժամկետը | Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մայրաքաղաք Պեկին<br>2019 թվականի ապրիլի 27-30-ը |
| 4. | Հրավիրող կողմը | <<Պեկին էքսպո 2019>> միջազգային այգեգործական ցուցահանդեսի կազմակերպչական կոմիտե |
| 5. | Գործուղման նպատակը աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը | Մասնակցություն <<Պեկին էքսպո 2019>> միջազգային այգեգործական ցուցահանդեսի բացման արարողությանը: |
| 6. | Քննարկված թեմաները | Հայաստանի Հանրապետությունից թարմ պտուղների, չորացրած մրգերի ու բանջարեղենի, գինեգործական արտադրանքի, ինչպես նաև բնական մեղրի Չինաստանի Հանրապետություն արտահանումների հնարավորությունները: |
| 7. | Հանդիպումները, ելույթները, բարձրացված, քննարկված հարցերը | Մասնակցել եմ տարբեր օտարերկրյա պետությունների ղեկավարների մասնակցությամբ <<Պեկին էքսպո 2019>> միջազգային այգեգործական ցուցահանդեսի բացման հանդիսավոր արարողությանը:<br><br>ՉԺՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանի հետ կատարվել է նշված ցուցահանդեսում հայկական տաղավարի բացումը:<br>Բացման իսկ առաջին օրը այցելուների թիվը հսկայական չափերի է հասել, ինչպես տեղացիների, այնպես էլ օտարերկրացիների կողմից: |

| | | |
|---|---|---|
| 8. | Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածություններ, ստորագրված փաստաթղթերը | ՉԺՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանի հետ քննարկվել և լրամշակվել է ՀՀ-ից ՉԺՀ մեղրի արտահանման վերաբերյալ համաձայնագրի տեքստը:<br>Պայմանավորվածություն է ձեռք բերվել չինական կողմի հետ հստակեցնելու համաձայնագրի ստորագրման ժամկետը: |
| 9. | Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները | Հաշվի առնելով ցուցահանդեսի ընթացքում ներկայացված հայկական արտադրանքի նկատմամբ բարձր հետաքրքրվածությունը՝ առաջարկվեց քննարկել Հայաստանից Չինաստան թարմ պտուղ բանջարեղենի արտահանման հնարավորությունը, ինչին կարող է նպաստել նաև երկու երկրների միջև ուղիղ ավիափոխադրումների ստեղծումը: Այլ ճանապարհով փոխադրումների դեպքում հնարավոր կլինի միայն գինեգործական արտադրանքի, պահածոյացված պտուղ բանջարեղենի, չորացված մրգերի արտահանումը: |
| 10. | Գործուղվողները | ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ<br>Գառնիկ Պետրոսյան |
| 11. | Ստորագրությունը, ամսաթիվը | 06.05.2019թ. |